

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

**"B** ԽՈՐՀՐԴԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 21-Ի 1999/63/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Եվրոպական համայնքի նավի սեփականատերերի ասոցիացիայի (ԵՀՆՍԱ), ինչպես նաեւ Տրանսպորտի ոլորտում աշխատողների՝ Եվրոպական միությունում գործող միությունների ֆեդերացիայի հետ կնքված՝ «Ծովագնացների աշխատաժամերի կազմակերպման մասին» համաձայնագրի վերաբերյալ (ՏԱՖ)

(ՊՏ L 167, 02.07.1999թ., էջ 33)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

Թիվ էջ ամսաթիվ

**M1** Խորհրդի 2009 թվականի փետրվարի 16-ի L 124 30 20.05.2009թ.  
2009/13/ԵՀ հրահանգով

Ուղղված՝

**C1** Ուղղում՝ ՊՏ L 244, 16.06.1999թ., էջ 64 (1999/63)

**B**

**ԽՈՐՀՐԴԻ 1999 թվականի հունիսի 21-ի 1999/63/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ**

Եվրոպական համայնքի նավի սեփականատերերի ասոցիացիայի (ԵՀՆՍԱ), ինչպես նաեւ Տրանսպորտի ոլորտում աշխատողների՝ Եվրոպական միությունում գործող միությունների ֆեդերացիայի հետ կնքված՝ «Ծովագնացների աշխատաժամերի կազմակերպման մասին» համաձայնագրի վերաբերյալ (ՏԱՖ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» համաձայնագիրը եւ, մասնավորապես, դրա 139(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

Քանի որ

- 1) Ամստերդամի պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 14-րդ Արձանագրությանը կից «Սոցիալական քաղաքականության մասին» համաձայնագրի դրույթները ներառվել են «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի 136-139-րդ հոդվածներում, որը կցված է «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրին, ինչպես փոփոխվել է Մասստրիխտի համաձայնագրով,
- 2) քանի որ Պայմանագրի 139(2) հոդվածին համապատասխան՝ ղեկավարությունը եւ աշխատողները («սոցիալական գործընկերներ») կարող են համատեղ պահանջել, որ Համայնքի մակարդակով կնքվող համաձայնագրերն իրականացվեն Խորհրդի որոշմամբ՝ Հանձնաժողովից ստացված առաջարկի հիման վրա,
- 3) Խորհուրդն ընդունել է «Աշխատաժամերի կազմակերպման որոշ հայեցակետերի մասին» 1993 թվականի նոյեմբերի 23-ի 93/104/ԵՀ հրահանգը, քանի որ ծովային տրանսպորտն այն ոլորտներից էր, որը չէր ներառվել այդ Հրահանգի գործողության ոլորտում,
- 4) աշխատաժամերի կազմակերպման, մասնավորապես՝ ծովագնացների աշխատաժամերին առնչվող հարցերի առնչությամբ պետք է հաշվի առնվեն Աշխատանքի միջազգային կազմակերպության համապատասխան կոնվենցիաները,
- 5) Հանձնաժողովը, «Սոցիալական քաղաքականության մասին» համաձայնագրի 3(2) հոդվածին համապատասխան, խորհրդակցել է ղեկավարության եւ աշխատողների հետ Համայնքի գործողությունների հնարավոր ուղղության վերաբերյալ՝ 93/104/ԵՀ հրահանգում չընդգրկված ոլորտների եւ գործողությունների առումով,
- 6) այդ խորհրդակցությունից հետո Հանձնաժողովը համարեց, որ ցանկալի է, որ

Համայնքը ձեռնարկի գործողություն այդ ոլորտում, եւ նշված Համաձայնագրի 3(3) հոդվածին համապատասխան եւս մեկ անգամ Համայնքի մակարդակով խորհրդակցեց ղեկավարության եւ աշխատողների հետ նախատեսված առաջարկի բովանդակության շուրջ,

- 7) Եվրոպական համայնքի նավի սեփականատերերի ասոցիացիան (ԵՀՆՍԱ) եւ Տրանսպորտի ոլորտում աշխատողների՝ Եվրոպական միությունում գործող միությունների ֆեդերացիան (ՏԱՖ) տեղեկացրեցին Հանձնաժողովին «Սոցիալական քաղաքականության մասին» համաձայնագրի 4-րդ հոդվածի համաձայն բանակցություններ վարելու իրենց ցանկության մասին,
- 8) նշված կազմակերպությունները 1998 թվականի սեպտեմբերի 30-ին կնքեցին «Ծովագնացների աշխատաժամերի կազմակերպման մասին» համաձայնագիր. այդ համաձայնագիրը պարունակում է Հանձնաժողովին ուղղված համատեղ պահանջ՝ Հանձնաժողովից ստացված առաջարկի մասին Խորհրդի որոշմամբ համաձայնագիրն իրականացնելու մասին՝ «Սոցիալական քաղաքականության մասին» համաձայնագրի 4(2) հոդվածի համաձայն,
- 9) Խորհուրդը, «Եվրոպական միության սոցիալական քաղաքականության որոշ հայեցակետերի մասին. Միությունում տնտեսական եւ սոցիալական համապատասխանեցմանը նպաստելու մասին» 1994 թվականի դեկտեմբերի 6-ի իր որոշմամբ ( 2 ) պահանջեց, որ ղեկավարները եւ աշխատողները օգտվեն պայմանագրեր կնքելու հնարավորություններից, քանի որ դրանք ավելի մոտ են սոցիալական իրականությանը եւ սոցիալական խնդիրներին,
- 10) Համաձայնագիրը վերաբերում է անդամ պետության տարածքում գրանցված պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող եւ ծովային առետրային գործունեության մեջ սովորաբար ընդգրկված ծովային նավի վրա աշխատող ծովագնացներին,

- 11) Պայմանագրի 249-րդ հոդվածի իմաստով Համաձայնագրի կիրարկման պատշաճ գործիք է համարվում հրահանգը. այն պարտավորեցնում է անդամ պետություններին արդյունքի հասնել՝ միեւնույն ժամանակ ձեւի եւ մեթոդների ընտրության հնարավորությունը թողնելով ազգային մարմիններին,
- 12) Պայմանագրի 5(բ) հոդվածով նախատեսված լրացուցչության եւ համաչափության սկզբունքներին համապատասխան՝ սույն Հրահանգի նպատակները չեն կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից եւ ուստի, դրանք ավելի արդյունավետորեն կարող են իրագործվել Համայնքի կողմից. սույն Հրահանգով չի նախատեսվում ավելին, քան անհրաժեշտ է՝ նշված նպատակներին հասնելու համար,
- 13) հաշվի առնելով այն հանգամանքը, որ Համաձայնագրում օգտագործված սահմանումները դրանով կոնկրետ սահմանված չեն, սույն Հրահանգը, ինչպես նմանատիպ սահմանումներ օգտագործող սոցիալական քաղաքականության մասին մյուս հրահանգները, թույլ է տալիս անդամ պետություններին նշված սահմանումները ազգային իրավունքին եւ գործելակերպին համապատասխան սահմանել՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն Համաձայնագրի բովանդակությանը,
- 14) Հանձնաժողովը մշակել է Հրահանգի վերաբերյալ իր առաջարկությունը, «Համայնքի մակարդակում սոցիալական երկխոսությունը համապատասխանեցնելու եւ խրախուսելու մասին» 1998 թվականի մայիսի 20-ի իր հաղորդագրության համաձայն՝ հաշվի առնելով Ստորագրող կողմերի ներկայացուցչության կարգավիճակը եւ Համաձայնագրի յուրաքանչյուր հոդվածի օրինականությունը,
- 15) Հանձնաժողովը, «Սոցիալական քաղաքականության մասին համաձայնագրի կիրառման մասին» 1993 թվականի դեկտեմբերի 14-ի իր հաղորդագրությանը համապատասխան, տեղեկացրել է Եվրոպական պառլամենտին ու Տնտեսական եւ Սոցիալական հարցերով կոմիտեին՝ նրանց ուղարկելով Համաձայնագիրը պարունակող

Հրահանգի տեքստի վերաբերյալ իր առաջարկության տեքստը,

16) Համաձայնագրի կիրարկումը նպաստում է Պայմանագրի 136-րդ հոդվածի նպատակների իրականացմանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

### *Հոդված 1*

Սույն Հրահանգի նպատակն է գործողության մեջ դնել «Ծովագնացների աշխատաժամերի կազմակերպման մասին» համաձայնագիրը, որը կնքվել է 1998 թվականի սեպտեմբերի 30-ին ծովային ոլորտում գործող՝ ղեկավարությանը եւ աշխատողներին ներկայացնող կազմակերպությունների միջեւ (ԵՀՆՍԱ եւ ՏԱՖ), ինչպես սահմանված է դրան կից հավելվածով:

### *Հոդված 2*

#### **Նվազագույն պահանջները**

1. Անդամ պետությունները կարող են պահպանել կամ ներմուծել ավելի բարենպաստ դրույթներ, քան սահմանված են սույն Հրահանգով:
2. Սույն Հրահանգի իրականացումը ոչ մի դեպքում բավարար հիմք չէ՝ սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում աշխատողների պաշտպանության ընդհանուր մակարդակը նվազեցնելու համար: Սա չի սահմանափակում անդամ պետությունների եւ (կամ) ղեկավարության ու աշխատողների իրավունքները՝ փոփոխվող հանգամանքներում սահմանելու սույն Հրահանգի ընդունման ժամանակ գործող օրենսդրական, կարգավորիչ կամ պայմանագրային պայմանավորվածություններից տարբերվող այլ պայմանավորվածություններ՝ պայմանով, որ սույն Հրահանգով սահմանված նվազագույն պահանջները մշտապես բավարարվեն:

### *Հոդված 3*

#### **Փխատեղումը**

1. Անդամ պետությունները գործողության մեջ են մտցնում սույն Հրահանգի համապատասխանեցման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները մինչեւ 2002 թվականի հունիսի 30-ը կամ ապահովում են, որ ամենաուշը մինչեւ այդ ամսաթիվը, ղեկավարությունը եւ աշխատողները համաձայնության գան անհրաժեշտ միջոցների շուրջ եւ ներմուծեն դրանք, մինչդեռ անդամ պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ քայլեր, որոնք նրանց հնարավորություն կտան ցանկացած ժամանակ ապահովելու սույն Հրահանգով նախատեսված արդյունքները: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին պարբերությունում նշված դրույթները, դրանք պետք է պարունակեն սույն Հրահանգին կատարվող հղում կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու տարբերակները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

### *Հոդված 4*

#### **Հասցեատերերը**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

*Ծովագնացների աշխատաժամերի կազմակերպման մասին*

Հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագրին կցված՝ «Սոցիալական քաղաքականության վերաբերյալ» արձանագրությանը կից «Սոցիալական քաղաքականության մասին» համաձայնագիրը եւ, մասնավորապես, դրա 3(4) եւ 4(2) հոդվածները,

քանի որ «Սոցիալական քաղաքականության մասին» համաձայնագրի 4(2) հոդվածով սահմանվում է, որ Եվրոպական մակարդակով կնքված համաձայնագրերը կարող են իրականացվել ստորագրող կողմերի համատեղ պահանջի դեպքում՝ Հանձնաժողովից ստացված առաջարկի վերաբերյալ խորհրդի որոշմամբ,

քանի որ սույնով ստորագրող կողմերը նման պահանջ են ներկայացնում,

ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԻՆ ՀԵՏԵՎՅԱԼԻ ՇՈՒՐՋ.

*Հոդված 1*

Համաձայնագիրը կիրառվում է անդամ պետության տարածքում գրանցված պետական կամ մասնավոր սեփականություն հանդիսացող եւ սովորաբար ծովային առետրային գործունեություն իրականացնող յուրաքանչյուր ծովային նավի վրա աշխատող ծովագնացների նկատմամբ: Սույն Համաձայնագրի նպատակներով այն նավը, որը գրանցված է երկու պետությունների ռեգիստրում, համարվում է այն պետության տարածքում գրանցված, որի դրոշի ներքո այն նավարկում է:

2. Եթե կասկած է առաջանում այն հարցի շուրջ, թե արդյոք նավերը, սույն Համաձայնագրի նպատակներով, համարվում են ծովային նավեր կամ ծովային առետրային գործունեություն իրականացնող նավեր, ապա այդ հարցի վերաբերյալ որոշում է կայացնում անդամ պետության իրավասու մարմինը: Պետք է խորհրդակցել նավի սեփականատերերի եւ ծովագնացների կազմակերպությունների հետ:

**M1**

3. Եթե կասկած է առաջանում այն հարցի շուրջ, թե արդյոք անձանց որեւէ խումբ համարվում է ծովագնաց՝ սույն Համաձայնագրի նպատակներով, ապա այդ հարցի վերաբերյալ որոշում է կայացնում յուրաքանչյուր անդամ պետության իրավասու մարմինը՝ տվյալ հարցով զբաղվող նավերի սեփականատերերի եւ ծովագնացների կազմակերպությունների հետ խորհրդակցելուց հետո: Այս համատեքստում բավարար ուշադրություն պետք է դարձվի Աշխատանքի միջազգային կազմակերպության Գլխավոր խորհրդաժողովի (Ծովային հարցերով) 94-րդ նստաշրջանի «Աշխատանքային խմբերի մասին տեղեկատվության մասին» բանաձեւին:

**B**

### *Հոդված 2*

Սույն Համաձայնագրի նպատակներով՝

ա) «աշխատաժամեր» եզրը նշանակում է այն ժամանակը, որի ընթացքում ծովագնացը պետք է նավի հետ կապված աշխատանք կատարի,

բ) «հանգստի ժամեր» եզրը նշանակում է աշխատանքային ժամեր չներառող ժամանակահատված. այս եզրը չի ներառում կարճ ընդմիջումները,

**M1**

գ) «ծովագնաց» եզրը նշանակում է ցանկացած անձ, ով որեւէ պաշտոնում աշխատում է նավի վրա, որի նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը,

դ) «նավի սեփականատեր» եզրը նշանակում է նավի սեփականատերը կամ այլ կազմակերպություն կամ անձ, ինչպես, օրինակ՝ կառավարիչը, գործակալը կամ առանց անձնակազմի նավը վարձակալող անձը, ով սեփականատիրոջ փոխարեն ստանձնել է նավի շահագործման գործառույթը եւ ով, ստանձնելով նման պատասխանատվություն, համաձայնել է, սույն Համաձայնագրին համապատասխան, ստանձնել նավի սեփականատերերին վերապահված պարտականություններն ու գործառույթները՝ անկախ այն բանից, թե որեւէ այլ կազմակերպություն կամ անձինք նավի սեփականատիրոջ անունից իրականացնում են այդպիսի որոշ պարտականություններ կամ գործառույթներ:

**B**



### Հողված 3

5-րդ հողվածում նշված սահմաններում ամրագրվում են կամ այն առավելագույն աշխատաժամերը, որոնք չպետք է գերազանցվեն տվյալ ժամանակահատվածի համար, կամ հանգստի նվազագույն հաճախականությունն ու ժամերը, որոնք պետք է տրամադրվեն տվյալ ժամանակահատվածում:

### Հողված 4

Չհակասելով 5-րդ հողվածի դրույթներին՝ ծովագնացների համար սովորական աշխատաժամերի ստանդարտը հիմնականում կազմում է օրական ութ ժամ՝ շաբաթական մեկ հանգստյան օրով՝ ներառյալ պետական տոներին տրամադրվող հանգստյան օրերը: Անդամ պետությունները կարող են սահմանել ընթացակարգեր՝ ծովագնացների համար սովորական աշխատաժամերն այս ստանդարտից պակաս նպաստավոր ստանդարտի հիման վրա սահմանող կոլեկտիվ պայմանագրի թույլտվություն տալու կամ այն գրանցելու համար:

### Հողված 5

1. Աշխատաժամերի կամ հանգստի ժամերի սահմանաչափերը պետք է լինեն կամ

ա) առավելագույն աշխատաժամերը, որոնք չպետք է գերազանցեն՝

i) 14 ժամը՝ յուրաքանչյուր 24 ժամվա ընթացքում եւ

ii) 72 ժամը՝ յուրաքանչյուր 7 օրվա ընթացքում,

կամ

բ) հանգստի նվազագույն ժամերը, որոնք չպետք է պակաս լինեն

i) 10 ժամից՝ յուրաքանչյուր 24 ժամվա ընթացքում եւ

**C1**

ii) 77 ժամից՝ յուրաքանչյուր 7 օրվա ընթացքում:

**B**

2. Հանգստի ժամերը կարող են բաղկացած լինել ոչ ավելի, քան երկու փուլից՝ մեկը պետք է ունենա առնվազն 6 ժամ տեւողություն եւ հանգստի հաջորդական փուլերի միջեւ դադարը չպետք է գերազանցի 14 ժամը:
3. Ազգային օրենսդրությամբ եւ կանոնակարգերով ու միջազգային փաստաթղթերով նախատեսված փրկարարական, հակահրդեհային ու փրկանավակների օգտագործման վարժանքներն իրականացվում են այնպիսի պայմաններում, որ նվազագույնին հասցվի հանգստի համար նախատեսված ժամերի օգտագործումը եւ հոգնածության չառաջանա:
4. Այն իրավիճակներում, երբ ծովագնացը հերթապահություն է իրականացնում, օրինակ, երբ մեքենայական բաժանմունքը գործում է առանց հերթափոխի, ծովագնացին, որպես փոխհատուցում, տրվում է համարժեք հանգստի ժամանակ, եթե հանգստի սովորական ժամանակահատվածն ընդհատվել է աշխատանքի կանչվելու պատճառով:
5. 3-րդ եւ 4-րդ պարբերությունների դեպքում, երբ չկա կոլեկտիվ պայմանագիր կամ արբիտրաժային վճիռ, կամ եթե իրավասու մարմինը որոշում է, որ պայմանագրի դրույթներով կամ վճռով նախատեսված փոխհատուցումը համարժեք չէ, ապա իրավասու մարմինը կարող է սահմանել դրույթներ՝ դրանց միջոցով ապահովելով, որ այդ ծովագնացները հանգստի բավարար ժամանակ ունենան:
6. Հաշվի առնելով աշխատողների առողջության պաշտպանության եւ անվտանգության սկզբունքները՝ անդամ պետությունները կարող են ունենալ ազգային օրենսդրություն, կանոնակարգեր կամ ընթացակարգ, որոնց հիման վրա իրավասու մարմինը կարող է հավանություն տալ կոլեկտիվ պայմանագրերին կամ գրանցել դրանք՝ 1-ին եւ 2-րդ պարբերություններով նախատեսված սահմանաչափերի նկատմամբ բացառություններ թույլ տալով: Նման բացառությունները պետք է հնարավորինս պահպանեն սահմանված ստանդարտները, սակայն կարելի է հաշվի առնել հերթապահող ծովագնացներին կամ կարճատեւ նավարկությունների ժամանակ նավի վրա աշխատող ծովագնացներին ավելի հաճախակի կամ երկարատեւ արձակուրդ կամ որպես

փոխհատուցում տրվող արձակուրդ տրամադրելու հնարավորությունը:

7. Մատչելի վայրում տեղադրվում է անձնակազմի աշխատանքային պայմանավորվածությունները ներառող հաշվետախտակ, որի վրա յուրաքանչյուր պաշտոնի համար նշվում է առնվազն հետեւյալը՝
  - ա) ծովում եւ նավահանգստում ծառայության ժամանակացույցը եւ
  - բ) առավելագույն աշխատաժամերը կամ հանգստի նվազագույն ժամերը, ինչպես սահմանված է օրենքներով, կանոնակարգերով կամ կոլեկտիվ պայմանագրերով, որոնք գործում են անդամ պետություններում:
  
8. 7-րդ պարբերությունում նշված հաշվետախտակը կազմվում է ստանդարտ ձեւաչափով՝ նավի աշխատանքային լեզվով կամ լեզուներով եւ անգլերենով:

### *Հոդված 6*

#### **M1**

1. 18 տարեկանը չլրացած ծովագնացների գիշերային աշխատանքն արգելվում է: Սույն հոդվածի նպատակներով՝ «գիշեր» հասկացությունը սահմանվում է ազգային իրավունքին եւ գործելակերպին համապատասխան: Այն ընդգրկում է առնվազն ինը ժամ՝ սկսած ոչ ուշ, քան կեսգիշերից մինչեւ ոչ վաղ, քան ժամը 5-ը:
  
2. Իրավասու մարմնի կողմից կարող է բացառություն նախատեսվել գիշերային աշխատանքի սահմանափակման առնչությամբ, երբ
  - ա) կարող է վտանգվել տվյալ ծովագնացների՝ հաստատված ծրագրերի եւ ժամանակացույցերի համաձայն արդյունավետ դասընթացների անցկացումը կամ
  - բ) աշխատանքի հատուկ բնույթի պատճառով կամ հաստատված դասընթացների ծրագրով պահանջվում է, որ ծովագնացները, որոնց նկատմամբ կիրառվում է բացառությունը, իրենց պարտականությունները կատարեն գիշերը, եւ լիազոր մարմինը տվյալ նավի սեփականատերերի եւ ծովագնացների կազմակերպությունների հետ խորհրդակցելուց հետո

որոշում է, որ աշխատանքը վնաս չի պատճառի նրանց առողջությանը կամ բարեկեցությանը:

3. 18 տարեկանը չլրացած ծովագնացներին աշխատանքի ընդունելը, աշխատանքներում ներգրավելը կամ նրանց աշխատանքն արգելվում է, եթե աշխատանքը կարող է վտանգել նրանց առողջությունը կամ անվտանգությունը: Նման աշխատանքի տեսակները սահմանվում են ազգային օրենսդրությամբ կամ կանոնակարգերով, կամ իրավասու մարմնի կողմից՝ նավի սեփականատերերի եւ ծովագնացների տվյալ կազմակերպությունների հետ խորհրդակցելուց հետո՝ համապատասխան միջազգային ստանդարտների համաձայն:

## **B**

### *Հոդված 7*

1. Նավապետն իրավունք ունի պահանջելու, որ ծովագնացը ցանկացած ժամի աշխատանք կատարի նավի, նավի վրա գտնվող անձանց կամ բեռների անմիջական անվտանգության համար կամ այլ նավերի կամ ծովում գտնվող անձանց օգնություն ցուցաբերելու նպատակով:

2. 1-ին պարբերության համաձայն՝ նավապետը կարող է կասեցնել աշխատանքային ժամանակացույցը կամ հանգստի ժամանակը եւ պահանջել, որ ծովագնացը ցանկացած ժամի աշխատանք կատարի՝ մինչեւ բնականոն իրավիճակի վերականգնումը:

3. Հնարավորինս շուտ բնականոն իրավիճակ հաստատելուց հետո, նավապետն ապահովում է, որ յուրաքանչյուր ծովագնաց, ով աշխատել է հանգստի համար նախատեսված ժամանակահատվածում, ստանա համարժեք հանգստի հնարավորություն:

### *Հոդված 8*

1. Ծովագնացների օրական աշխատաժամերի կամ հանգստի ժամերի մասին գրառումները պահպանվում են՝ 5-րդ հոդվածով սահմանված դրույթներին համապատասխանությունն ստուգելու համար: Ծովագնացը ստանում է իրեն վերաբերող գրառումների պատճենը, որը հաստատվում է նավապետի կողմից կամ նավապետի կողմից լիազորված անձի կամ ծովագնացի կողմից:

2. Ընթացակարգեր են սահմանվում՝ այդ գրառումները՝ ներառյալ այդ տեղեկությունները գրառելու պարբերականությունը, նավում պահելու համար: Ծովագնացների

աշխատաժամերի եւ հանգստի ժամերի մասին գրառումների ձեւաչափը սահմանվում է՝ առկա միջազգային ցանկացած ուղեցույցի հիման վրա: Ձեւաչափը սահմանվում է այն լեզվով, որը նախատեսված է 5-րդ հոդվածի 8-րդ պարբերությամբ:

3. Սույն Համաձայնագրին վերաբերող ազգային օրենսդրության համապատասխան դրույթների կրկնօրինակը եւ համապատասխան կոլեկտիվ պայմանագրերը պահվում են նավի վրա եւ հասանելի են անձնակազմին:

#### *Հոդված 9*

8-րդ հոդվածում նշված գրառումներն ուսումնասիրվում եւ հաստատվում են համապատասխան պարբերականությամբ՝ ստուգելով սույն Համաձայնագրի կատարման նպատակով աշխատաժամերի եւ հանգստի ժամերի մասին դրույթներին համապատասխանությունը:

#### *Հոդված 10*

1. Երբ սահմանվում, հաստատվում կամ վերանայվում է անձնակազմի համալրվածության մակարդակը, անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքի լրացուցիչ ժամերից հնարավորինս խուսափելու կամ դրանք նվազագույնին հասցնելու անհրաժեշտությունը՝ բավարար հանգիստ եւ հոգնածության սահմանափակ աստիճան ապահովելու համար:

2. Եթե գրառումները կամ այլ ապացույցներ վկայում են աշխատաժամերը կամ հանգստի ժամերը կարգավորող դրույթների խախտումների մասին, ապա հետագայում խախտումներից խուսափելու համար միջոցներ են ձեռնարկվում, անհրաժեշտության դեպքում՝ իրականացվում է նաեւ նավի անձնակազմի վերանայում:

3. Բոլոր այն նավերը, որոնց վերաբերում է սույն Համաձայնագիրը, պետք է ունենան անվտանգ ու արդյունավետորեն համալրված բավարար թվով անձնակազմ՝ նվազագույն անձնակազմի անվտանգ համալրման մասին փաստաթղթի կամ իրավասու մարմնի կողմից տրված համարժեք փաստաթղթի համաձայն:

### Հոդված 11

16 տարեկանը չլրացած անձը չի կարող աշխատել նավի վրա:

### Հոդված 12

Նավի սեփականատերը նավապետին տրամադրում է անհրաժեշտ ռեսուրսներ՝ սույն Համաձայնագրով նախատեսված պարտականությունները կատարելու համար՝ ներառյալ նավի անձնակազմի պատշաճ համալրմանը վերաբերող փաստաթղթերը: Նավապետը ձեռնարկում է անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելով, որ ծովագնացների՝ սույն Համաձայնագրից ծագող աշխատաժամերի կամ հանգստի ժամերի վերաբերյալ պահանջները բավարարվեն:

### Հոդված 13

#### **M1**

1. Ծովագնացները չեն աշխատում նավի վրա, եթե բժշկական զննության արդյունքում չի հաստատվում, որ առողջական վիճակը թույլ է տալիս նրանց կատարել իրենց պարտականությունները:
2. Բացառություններ կարող են նախատեսվել միայն սույն Համաձայնագրով նախատեսված դեպքերում:
3. Իրավասու մարմինը պահանջում է, որ նավի վրա աշխատանքն սկսելուց առաջ ծովագնացներն ունենան բժշկական վավերական հավաստագիր, որը կհաստատի, որ առողջական վիճակը թույլ է տալիս նրանց ծովում կատարել իրենց վերապահված պարտականությունները:
4. Ծովագնացներին վերապահված պարտականությունները նկատի ունենալով՝ նրանց առողջության վիճակի իրական պատկերը բժշկական հավաստագրերով ապահովելու համար, իրավասու մարմինը պետք է տվյալ նավի սեփականատերերի եւ ծովագնացների կազմակերպությունների հետ խորհրդակցելուց հետո եւ կիրառելի միջազգային ուղեցույցների հիման վրա՝ սահմանի բժշկական զննության եւ հավաստագրի բնույթը:

5. Սույն Համաձայնագիրը չի հակասում «Ծովագնացների ուսուցման, հավաստագրման եւ հերթապահության չափանիշների մասին» 1978 թվականի միջազգային կոնվենցիային (փոփոխություններով) (ՌԻՀՀԶ): ՌԻՀՀԶ պահանջներին համապատասխան տրված հավաստագիրն, ընդունվում է իրավասու մարմնի կողմից՝ սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի նպատակով: Բժշկական հավաստագիրը, որը բավարարում է այդ պահանջները, ՌԻՀՀԶ-ով չնախատեսված ծովագնացների դեպքում, նույն կերպ է ընդունվում:

6. Բժշկական հավաստագիրը տրամադրվում է պատշաճ որակավորում ունեցող բուժաշխատողի կողմից, իսկ միայն տեսողությանը վերաբերող հավաստագրի դեպքում՝ իրավասու մարմնի կողմից՝ որպես նման հավաստագիր տրամադրելու որակավորում ունեցող անձ ճանաչված անձի կողմից: Բուժաշխատողները բժշկական զննության ընթացակարգերն իրականացնելիս պետք է ունենան իրենց բժշկական եզրակացությունը կատարելու մասնագիտական լիարժեք անկախություն:

7. Այն ծովագնացները, որոնց մերժել են հավաստագիր տրամադրել կամ սահմանափակում են դրել նրանց աշխատելու կարողության վրա, մասնավորապես՝ ժամանակի, աշխատանքի ոլորտի կամ առետրային տարածքի առումով, պետք է հնարավորություն ունենան հետագայում բուժզննության ենթարկվելու այլ անկախ բուժաշխատողի կամ անկախ բժշկական փորձագետի կողմից:

8. Բժշկական յուրաքանչյուր հավաստագրում մասնավորապես նշվում է, որ՝

ա) տվյալ ծովագնացի լսողությունը եւ տեսողությունը, իսկ այն ծովագնացի դեպքում, ով ընդունվում է այնպիսի պաշտոնում, որի կատարումը կարող է վտանգվել՝ գունազգացողության խանգարումների պատճառով, նաեւ գունազգացողությունը բավարար են, եւ

բ) տվյալ ծովագնացը չունի առողջական որեւէ խնդիր, որը կարող է վատթարանալ՝ ծովում ծառայության պատճառով կամ նման ծառայության համար ծովագնացը կարող է ոչ պիտանի համարվել կամ վտանգել նավի վրա գտնվող այլ անձանց առողջությունը:

9. Եթե նախատեսված չէ ավելի կարճ ժամանակահատված՝ տվյալ ծովագնացի հատուկ պարտականությունների կատարման համար կամ ՌԻՀՀԶ-ի համաձայն, ապա՝

ա) բժշկական հավաստագիրը վավերական է առավելագույնը երկու տարի, իսկ եթե ծովագնացի 18 տարեկանը չի լրացել, վավերականության առավելագույն ժամկետը մեկ տարի է,

բ) գունազգացողության մասին հավաստագիրը վավերական է առավելագույնը վեց տարի ժամկետով:

10. Հրատապ դեպքերում իրավասու մարմինը կարող է թույլ տալ, որ ծովագնացն աշխատի առանց վավերական բժշկական հավաստագրի մինչև հաջորդ նշանակման նավահանգիստը, որտեղ ծովագնացը կարող է հավաստագիր ստանալ որակավորված բուժաշխատողի կողմից՝ պայմանով, որ

ա) նման թույլտվության ժամանակահատվածը չի գերազանցում երեք ամիսը եւ

բ) տվյալ ծովագնացն ունի բժշկական հավաստագիր, որի գործողության ժամկետը լրացել է վերջերս:

11. Եթե հավաստագրի վավերականության ժամկետը լրանում է նավարկության ընթացքում, ապա հավաստագիրն ուժի մեջ է մնում մինչև հաջորդ նշանակման նավահանգիստը, որտեղ ծովագնացը կարող է բժշկական հավաստագիր ստանալ որակավորված բուժաշխատողի կողմից՝ պայմանով, որ ժամկետը չի գերազանցի երեք ամիսը:

12. Ծովագնացների բժշկական հավաստագրերը, որոնք, որպես կանոն, միջազգային նավերի վրա են աշխատում, պետք է առնվազն անգլերեն տրամադրվեն:

13. Բժշկական հավաստագրում կատարվող առողջական վիճակի գնահատման բնույթը եւ ընդգրկվող մանրամասները սահմանվում են նավերի սեփականատերերի եւ ծովագնացների կազմակերպության հետ խորհրդակցելուց հետո:

14. Բոլոր ծովագնացներն անցնում են առողջական վիճակի պարբերական գնահատում: Գիշերային աշխատանքի պատճառով առաջացած եւ բուժաշխատողի կողմից հաստատված առողջական խնդիրներ ունեցող հերթապահները, հնարավորության դեպքում, անցնում են ցերեկային աշխատանքի:

15. 13-րդ եւ 14-րդ կետերում նշված առողջական վիճակի գնահատումը կատարվում է ազատորեն, եւ բժշկական գաղտնիության պահպանմամբ: Առողջական վիճակի նման գնահատումը կարող է իրականացվել ազգային առողջապահական համակարգի շրջանակներում:

▼B



#### Հոդված 14

Նավի սեփականատերերը հերթապահների եւ գիշերային հերթափոխով այլ աշխատողների մասին տեղեկություն են տրամադրում ազգային իրավասու մարմնին՝ վերջիններիս պահանջով:

#### Հոդված 15

Ծովագնացներն ունեն անվտանգության եւ առողջության պահպանության երաշխիքներ, որոնք համապատասխանում են իրենց աշխատանքի բնույթին: Պաշտպանության եւ կանխարգելման համարժեք ծառայությունները կամ միջոցները հասանելի են ցերեկային կամ գիշերային հերթափոխով աշխատող ծովագնացների անվտանգության եւ առողջության ապահովման համար:

#### Հոդված 16

##### **M1**

Յուրաքանչյուր ծովագնաց ունի ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք: Ամենամյա վճարովի արձակուրդը հաշվարկվում է աշխատանքի ամսական առնվազն 2.5 օրացուցային օրվա համար եւ համամասնորեն (*pro rata*)՝ չավարտված ամիսների համար: Ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն ժամանակահատվածը չի կարող փոխարինվել օրաբաժնի համար տրվող վճարով, բացառությամբ այն դեպքի, երբ աշխատանքային պայմանագիրը դադարեցվում է:

1) ՊՏ L 307, 13.12.1993թ., էջ 18:

2) ՊՏ C 368, 23.12.1994թ., էջ 6: